ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 16 նոյեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Ա. Պետրոսյանի

Քննության առնելով Լիլիթ Մուսեյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Լիլիթ Մուսեյանը 26.10.2015թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«ՀՀ Սահմանադրության 1-ին, 3, 18 և 19, 27.1-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 75-րդ հոդվածի «Հայցադիմումը հայցվորը ներկայացնում է վարչական դատարան առձեռն կամ ուղարկում է փոստով» և ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Վարչական մարմին կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողին հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկվում են նրանց պաշտոնական հասցեով» դրույթների «փոստով» ու «ուղարկվում են» դրույթների իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանությամբ, ...

ՀՀ Սահմանադրության 3, 18 և 19-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Վարչական մարմին կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողին հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկվում են նրանց պաշտոնական հասցեով» դրույթի «պաշտոնական հասցեով» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանությամբ, որով պաշտոնական հասցե չի համարում պետական մարմնի կամ պաշտոնատար անձի էլեկտրոնային պաշտոնական հասցեն,

կամ

բացահայտել՝ ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 75-րդ հոդվածի «Հայցադիմումը հայցվորը ներկայացնում է վարչական դատարան առձեռն կամ ուղարկում է փոստով» և ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Վարչական մարմին կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողին հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկվում են նրանց պաշտոնական հասցեով» դրույթների «փոստով» ու «ուղարկվում են» դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը,

բացահայտել՝ ՀՀ «Վարչական դատավարության» օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Վարչական մարմին կամ պաշտոնատար անձ հանդիսացող պատասխանողին հայցադիմումը և կից փաստաթղթերն ուղարկվում են նրանց պաշտոնական հասցեով» դրույթի՝ «պաշտոնական հասցեով» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը»:

2. Դիմողը նշում է, որ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման՝ օրենսդիրը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում դատավարական փաստաթղթերը դատավարության մասնակիցներին կամ գործը քննող դատարան ուղարկելու հիմնական միջոց է դիտարկում փոստը: Համապատասխան սուբյեկտը դատավարական փաստաթղթերը կարող է դատավարության մասնակիցներին կամ գործը քննող դատարան առաքել էլեկտրոնային փոստի միջոցով միայն այն դեպքում, երբ դրա իրավական հնարավորության մասին ուղղակիորեն ամրագրված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 75-րդ, 76-րդ հոդվածները հակասում են ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ, 27.1-րդ հոդվածներին, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածներին, քանի որ խոչընդոտում են անձի դատավարական իրավունքների իրացմանը, ինչպես նաև խախտում են արդարադատության մատչելիության և հասանելիության սկզբունքները:

Ըստ դիմողի՝ դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները և ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա. տվյալ դեպքում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 75-րդ և 76-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումը ողջամիտ չէ և միայն ձևական պահանջների պահպանմամբ խոչընդոտում է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված դատավարական իրավունքների իրացմանը:

3. Դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի կողմից **վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի դրույթը** չի կիրառվել իր նկատմամբ: Դատական համապատասխան ակտերում այս դրույթը վկայակոչվել է այն կտրվածքով, որ վերաքննիչ դատարանը, իր իրավական վերլուծությունները կատարելիս, հիմնվել և վկայակոչել է, ի թիվս այլնի, նաև նշյալ դրույթի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորած նախադեպային դիրքորոշումները:

ՀՀ սահմանադրական դատարանը 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին որպես պարտադիր պայման ներկայացվող պահանջներն ինքնանպատակ չեն: Դրանք կոչված են ապահովելու սահմանադրական արդարադատություն իրականացնելու՝ սահմանադրական դատարանի պատշաճ եւ արդյունավետ գործառույթի իրականացումը՝ դատարանին ձերբա-

զատելով ինչպես անհիմն դիմումներից եւ դրանց հետեւանքով դատարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ սահմանադրական դատարան կարող է դիմել «յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով **իր նկատմամբ կիրառված** օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածն օրենքին է վերապահել սահմանադրական դատարան դիմելու կարգի սահմանումը: Այդ հոդվածի 6-րդ կետն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, որը սահմանել է ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների ընդունելիության պայմանները: Դիմում կարող է ներկայացվել այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից՝

- որը հանդիսացել է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից,
- **որի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառվել է որևէ օրենքի դրույթ**,
- որի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառվել է գործը լուծող վերջնական դատական ակտով,
- որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար **իրավասու սուբյեկտ չէ**:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի առնչությամբ դատական կազմը գտնում է, որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,

- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Լիլիթ Մուսեյանի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի մասով մերժել:
2. «Լիլիթ Մուսեյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 76-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:
3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

16 նոյեմբերի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-20